

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմել 10 բուր, կես տարվանը 6 բուր է:
 Առանձին համարները 5 կոպեկով:
 Թիֆլիսում գրված են միմյանց անգլագրատան մեջ:
 Ծառայողացուցիչ գլխում են ուղղակի
 Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
 (Բացի կիրակի եւ տօն օրերէն):
 Հայտարարութիւն ընդունուած է ամեն կողմով:
 Հայտարարութիւնները համար գծորդում են
 իւրաքանչիւր բառին 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԻՒՆ

Քաղաքական մտածողները — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ: Նամակ Ախալցխայից: Նամակ Մօսկովայից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ: Աւստրո-Ունգարիա: Արտաքին լուրեր: ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Դաւիթ բէկ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԲՆԵՐ

Եւրոպան անդադար պահանջներ է անում Թիւրքիայից. պահանջում է որ նա այս կամ այն վերանորոգութիւն մտցնէ իր երկիրներից մինի մէջ, պաշտպանէ իր այս կամ այն հպատակ ազգութիւնը հալածանքներից, տայ ինքնավարութիւն իր այս կամ այն նահանգին:

Բայց ինչքան էլ տգէտ լինէին Թիւրք պետական մարզիկները, շատ լաւ են հասկանում որ այն պահանջները որ եւրոպական երկիրները Թիւրքիային

են անում, իրանք չեն կատարում իրանց երկիրների վերաբերութեամբ: Իրանք պահանջում են Թիւրքիայից ինքնավարութիւն կամ ազատութիւն տալ Թիւրքահայտակ այս կամ այն ազգին, իսկ իրանք հպատակ են ճնշում են իրանց հպատակ ազգերին: Խիստ պահանջներ Թիւրքիայից անելով, — եւրոպական պետութիւնների խրդաւրանքն էլ պէտք է աւելի մաքուր լինէր: Թիւրքիայի պէս մի երկրի վրա բարոյապէս ներգործելու համար, հարկաւոր կը լինէր որ Եւրոպան աւելի մեծ բարոյական հեղինակութիւն ունենար Թիւրքերի աչքում:

Բայց այդ հեղինակութիւնը Եւրոպան կորցրել է, մանաւանդ վերջին տարիները, ոչ թէ միայն Բ. Դրան պետական մարզիկների աչքում, բայց մինչև անգամ Թիւրք մամուլի աչքերում:

Եւրոպան իրան այնտեղ է հասցրել, որ մի օր և է «Վախրթ» Թիւրք մողեւանդ լրագիրը իրաւունք ունի ծաղրել Եւրոպային: Երբ Անգլիան այս կամ այն խիստ պահանջներ է անում Թիւրքիայից, — Կ. Պոլսի Թիւրք մամուլը պատասխանում է. իսկ դուք ինքներդ ի՞նչ էք անում իրանգացիների հետ. մի՞թէ դուք նրանց ամենամոտաւոր կերպով էք ճնշում:

Երբ որ Գերմանիան խառնը վում Օսմանեան պետութեան ներքին գործերում, — այդ տեսակ պատասխան է ստանում Թիւրքերից՝ իսկ դուք ինքներդ ի՞նչ էք արել էլզացիների և լեհացիների հետ, արդեօք ձեր հրէայ հպատակներին էլ այժմ էք հալածում, արդեօք ձեր Բիւսնովիկ էք ձգտում կատարելալ ինքնիշխանութեան ձեռք բերելուն:

Երբ Աւստրիան միջամտում է

Բալկանեան պովեանների կամ յայնների գործերի մէջ, — Թիւրքերը հարցնում են. իսկ ձեր ներգործած ճնշումը բօնիացիների և հերցեգովինցիների վրա, նրանց մէջ գործած ձեր անիրաւութիւնները մի՞թէ մեզ յայտնի չեն:

Փրանսիան աքտորում է իր երկրից հոգևոր միաբանութիւնները և մի և նոյն ժամանակ պաշտօնապէս յայտնում է Բ. Դրան որ իր հեղինակութեամբ պաշտպանելու է արևելքում նոյն եկեղեցական միաբանութիւններին: Եւրոպայի Թիւրքաց արտաքին գործերի մինստրութիւնը յանդգնաբար և կատարելալ իրաւունքով պատասխանում է Փրանսիային պաշտօնապէս թէ Թիւրքիան Փրանսիական յանցաւորների համար աքտորանքի տեղը է:

Ուրեմն լուսաւորված Եւրոպան այնտեղ է հասցրել իրան, որ այլ

ԴՆԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ
 (1722—1728)

Պատանին մի կողմից չնրի հետ կուռելով, միւս կողմից իր շուրջը աչք անելով, դիմաց դէպքի կուռը ձայնը: Ենթեր հովիւն մտանալով, փոքր ինչ ճանգասացան, երբ նկատեցին, որ նա չէ քաջաւերում իրանց վարձուքը: Պատանին բարեկեղծ, նստեց նրա մօտ: Հովիւը հասակն ուռած մարդ էր, այն լեռնային մարդերից մէկը, որ ստէպ անասունների հետ ապրելով, կորցրել էր բոլորը, ինչ որ մարդկային էր, և սեպակաւ ննկ էր վարձել անասնակաւ: Բայց, որպէս երևում էր, նա իր ոչխարների նման միամիտ, մի և նոյն ժամանակ բարեկամ էր:

— Ի՞նչ ստանայ ես, թէ որ փայտը չը վեր աւնէիր, իմ չնրը կը պատասխանէին քեզ, ստաց նա ծիծաղելով, որպէս թէ մի մեծ գիւտ էր արել իր նկատողութեան մէջ:
 — Հնա, եթէ փայտը չը վեր աւնէր, չնրը կը պատասխանէին ինձ, պատասխանեց պատանին ինքն էլ ծիծաղելով:
 — Ի՞նչ ստանայ ես, կրկնեց նա, շարունակելով իր բարեկամ ծիծաղը: — Բարեկցից գտար այն փայտը, շատ հաստ փայտ էր:

— Այո, շատ հաստ փայտ էր, ստաց պատանին, — այնտեղ ընկած էր, երևի կորոզները մոռացել էին:
 — Ապագան, կորոզները մոռացել էին, կրկնեց հովիւը: — Ինչպէս հասկացար, Աստուած է վկայ, շատ ստանայ ես:
 Կամենալով միանգամից վերջացնել փայտի պատմութիւնը, պատանին ոչինչ չը պատասխանեց: Բայց հովիւը դարձեալ կրկնեց:
 — Այդ լաւ է պատահել որ կորոզները մոռացել էին, Աստուած է վկայ, թէ որ փայտը չը լինէր, իմ չնրը քեզ կենդանի չէին թողնի:
 — Այդ ես էլ եմ իմանում, նրա իմաստուն կարծիքը հաստատեց պատանին: — Այդ ոչխարները ունեն են:
 — Ո՞ւրը պէտք է լինեն, պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ: — մեծ պարոնի ոչխարներն են:

Մեծ պարոն աւելի պատանին հասկացաւ, թէ ում մասին էր խօսքը, և սկսեց աւելի յարգանքով վերաբերվել դէպքի իր խօսակցը, երբ իմացաւ, որ նա թագաւորի հովիւն էր:

— Մեծ պարոնը ուրիշ ասարնք էլ ունի, հարցրեց նրանից:
 — Այնպէս որ ում այնքան ասարնք, որպէս մեր մեծ պարոնը, պատասխանեց հովիւը զարմացական կերպով դուրսը շարժելով: — այստեղ արածում են նրա ոչխարները, այնտեղ, սարի միջև կողմում, արածում են երկու քսանից աւելի կովեր, նոյնքան եղներ ու գոմէշներ: Բացի դրանցից, տասը էլ ունի, հինգ ջորի ունի, քսանից աւելի ձի ունի:

Այսքան ասարնք ի՞նչ մեր ճակնի մէջքը Կաւ լինի էլ ունի, իր մտքումը ստաց պատանին, ամենին չը զարմանալով մեծ պարոնի հարստութեան վրա:
 — Այս օրերս էլ ընծայ են բերել երկու ինչ որ անասուններ, անուշները չեն իմանում, աւելացրեց հովիւը:

— Ի՞նչ տեսակ անասուններ:
 — Ինչ որ ստանայի նման անասուններ. երկայն ոտներ ունեն, երկայն, ծուռը վիղ ունեն, քանի որ աւազ մեծ պարոնի դրանը դուռնայ անցնել, ողջ ախարըը համարվեցաւ այնտեղ: Նրանց դուրս էին բերել, թամաշայ էին անում:
 — Ես էլ այնտեղ էի, տեսայ, դրանք տղտղտ են, մեր երկրում շատ կայ. չըբեցնում են, յետոյ բռնում են:
 — Կրուտ ալդակ, չըբեցնում են յետոյ բռնում են, ինչ լաւ իմացար, ճշմարտ, շատ ստանայ ես եղև:

Ստանայ քառք, որ այնքան յաճախ գործ էր անում հովիւը, նրա լեզուով բողբոլին այլ իմաստ ունէր. դա նշանակում էր խելացի, ամեն բան իմացող, ամեն բան շուտ համարացող: Բայց զգուշանալով, մի գուցէ ուղիղ պատմութիւնն էլ այնքան հեռու տանէր շատախօս հովիւին, որպէս փայտի պատմութիւնը, նա կարճ կտրեց, սկսելով մի այնպիսի խօսակցութիւն, որից կարող լինէր տեղեկութիւն ստանալ փոքրիկ աղջկայ մասին:
 — Այդ ոչխարները օրը քանի անգամ կթում են, հարցրեց նա, իր շուրջը նայելով, որպէս թէ ոչխարներին է նայում:
 — Գանի անգամ պէտք է կթեն, պատաս-

խանեց հովիւը իր խապտ ձայնով: — երկու անգամ են կթում. մէկը կէսօրին, մէկը երեկոյան. երբ ոչխարները տուն են դառնում:

— Կէսօրին, երեկ, դառնում են կթում:
 — Կաշուտը, ապա օրտեղ: Չը տեսար, կնիկները կաթի կեղեր տանում էին:
 — Տեսայ, կրկն, մեծ պարոնի տուն էին տանում:
 — Ապա օրտեղ պիտի տանէին: Այնտեղ էին տանում:
 — Այդ կնիկները օրերը էին:
 — Ո՞րքեր պիտի լինէին. մեծ պարոնի քոծերն էին:

Պատանին փոքր աւ փոքր համում էր իր հետաքրքրութեան առարկային:
 — Կրկնեց մէջ մի փոքրիկ աղջիկ կար, կարմիր դերիայ ունէր հագած, օճ էր նա:
 — Կուր Թամարի մասին ես հարցնում, ստաց հովիւը բարեկամ ժպտով: — Թամարը մեծ պարոնի կողքի աղջիկն է. շատ անգամ քոծերի հետ դալիս է ոչխարների մօտ, և երբեմն ինձ համար իւզով հաց է բերում, Ես էլ նրա համար քաղում եմ անտառից դիւն, յուն, կաղին և ուրիշ պտուղներ: Շատ լաւ աղջիկ է Թամարը:

Եթէ նրա մայրը չը մեռնէր, Թամարը այսպէս չէր լինի: Մեր այժմեան տիկինը լաւ մտիկ չէ տալիս Թամարին: Ախ, լաւ է, որ տղան չուտով մեռնի ու խորթ մօր ձեռքը չընկնի: Հանգուցեալ տիկինը շատ լաւ տիկին էր. ես գիտ պահել եմ տրեխները, որ մի անգամ նա ինձ ընծայեց:

Այնուհետև նա սկսեց պատմել, թէ Թամարի մայրը մեռնելուց յետոյ, թէև նրա հայրը կրկին ամուսնացաւ, բայց իր նոր կնոջ հետ ապրեց մի քանի տարի միայն: Մի անգամ լեզկիների յարձակման ժամանակ, կուրի մէջ վերք ստանալով, մեռաւ նա: Այնուհետև Թամարը մնաց բաղնիքին որը, իր խորթ մօր ապով: Այժմ թէ Թամարը և թէ խորթ մայրը կենում են մեծ պարոնի տանը, և մեծ պարոնը իր դաւանիւրից չէ ջոկում Թամարին:
 Վերջացնելով իր պատմութիւնը, հովիւը իր կողմից սկսեց հետաքրքրել լինել պատանու ինչ աղջիկ և օրտեղացի լինելու մասին, հարցրեց թէ նա ինչ է չինում վրաց կրկում. ինչով է ապրում, և երբ պատասխան տաացաւ, թէ ոչինչ պարապմունք չունի, ստաց:

— Տեսնում եմ, որ դու քաջ տղայ ես, շատ քաջ, իմ չնրի ձեռքից մինչև այսօր մի մարդ էլ չի պոծել, իսկ դու նրանց շէրտացիր: — Կը ջանկանաս ինձ մօտ մնայ:
 — Քեզ մօտ ինչ չինեմ, հարցրեց պատանին ծիծաղելով:

— Ի՞նչ պիտի չինես. ես ինչ որ չինում եմ, դու էլ այն կը չինես, պատասխանեց հովիւը, իր թաւամաղ յօնքերի տակ թաղված աչքերը լայն բացելով և ուղիղ պատանու երեսին նայելով: — Լսիր, տղաս, շարունակեց նա, — իմ օգնականներից մէկը իմ ցուպը գողացաւ, յետոյ փախաւ. հիմայ ինձ մէկ մարդ է հարկաւոր, դու իմ օգնականը կը դառնաս ու ինձ հետ ոչխարներ կարածայնես, մեծ պարոնի ոչխարները, հակառակ էս, դա պտիկ գործ է:

Այդ առաջարկութիւնը, թէև սկզբում շատ ծիծաղելի թուեցաւ պատանուն, թէև նրան շատ հրապուրել էր իմ մեծ պարոնի հովիւ օգնական լինելը, բայց, կարծես, մի ներքին ազդմամբ ստիպվեցաւ նա հաշտվել այդ վիճակի հետ: Գլխաւոր շարժառիթը, որ դրեց նրան կապելը այդ նոր պարապմունքի հետ, այն էր, որ սա առիթ կը տար երբեմն տեսնել գեղեցիկ Թամարին, որի ամբարտա պատմութիւնը մի կողմից, իսկ իրան ցոյց տուած կարեկցութիւնը միւս կողմից, թողել էին նրա սրտում մի խուլ, համակրական զգացմունք, որը թէև ինքը բացատրել չէր կարողանում, բայց միանգամայն տիրել էր նրա հոգուն: Բացի դրանից, նրան քաղցր էր, առժամանակ գոնէ, իր սրտի վշտերը ցրվել լեռների, դաշտերի, անտառների առանձնութեան մէջ, հեռու լինել մարդերի բնակութիւնից, որոնցից ոչ մի միտքարութիւն չէր գտնել նա: Այդ պատճառով նա աւելի բարեւոք համարեց կենակցել միամիտ հովիւների հետ, լսել նրանց պարը, հասարակ պատմութիւնները, քան թէ լսել աւագակ հայ մանրախաճախ անդադար նախապիւնները, որը այնքան անխիղճ կերպով կողոպտեց նրան:

— Կէ, սաս, տղաս, մեծ ես ինձ մօտ, կրկին հարցրեց հովիւը:
 — Կը մնամ, պատասխանեց պատանին:
 (Կը շարունակուի)

որ նա յազմել է Պեթեր Լլոյդի լրագրիչներին, ու լրագրիչներն նրանք մինչև այժմ հետևում են թուրքի և չեքոսլովակացի Աւստրիայի հետ միացմանը մտքով: Մի քանի ժամանակ առաջ զանազան լուրեր տարածված էին կիսապաշտօնական «Pester Lloyd» լրագրում Բոսնիայի և չեքոսլովակացի մասին, որտեղ սատակ մուծ գոյներով էր նկարագրված այդ երկիրների ներքին կառավարությունը: Այստեղի բնակիչների անբուհականությունը վերջին ծայրն է հասել. ամեն տեղ մէկ տեսակ խառն է տիրապետում հարկերով ծանրաբեռնած է ժողովուրդը, աղքատներին և թշուառներին թիւ չը կայ: Կառավարական օրգանները բաշխուղուկներից վատ են վարվում ժողովուրդի հետ, այնպէս որ շատերը սկսեցին հարցնում են՝ թէ այժման կարգերը ի՞նչով լաւ են առաջվանից, և այլն:

Մի քանի օրից յետոյ հերքվեցան այդ լուրերը և դրանց հեղինակին մեղադրեցին սուտ լուրեր տարածելու մէջ: Իսկ այժմ, «Pester Lloyd» ինքն է հանդէս գալի որպէս ջատագով Բոսնիա և չեքոսլովակացի Աւստրիայի հետ միացմանը դադարաւրդն: Պեթեր Լլոյդ օրգանին շտապեցին, ի հարկէ, միանայ և Վիեննայի կիսապաշտօնական լրագրիչները, որոնք անապարձութեամբ կրկնում են, որ նրանք առաջ ևս շատ անգամ խօսել են «միանայ» անհրաժեշտութեան մասին: Քանի որ, կրկնում են այդ լրագրիչները, այդ երկիրները չեն միանայ կայսերութեան հետ, ոչ ոքից չէ կարելի պահանջել այնտեղի գործերի համար պատասխանատու լինել, որոնք կարող են կանոնադրվել միայն այն ժամանակ, երբ Աւստրո-Ունգարիան կիմնայ որ նա աշխատում է իր սեփական և ոչ թէ օտար նահանգների համար: Այդ լրագրիչները շարունակում են խօսել, ի հարկէ, Աւստրիայի քաղաքակրթիչ դերին՝ մասին, որը կը տարածի լուսաւորութիւնը միայն իր սեփական նահանգներում: Մի խօսքով Վիեննայի կիսապաշտօնական լրագրիչները մեծ անորոշակ են ստացել և թշուառ բռնադատից և հերքի գովնեցիք, երեւի, մօտիկ ապագայում գոհ կերթան նրանց ակտիվակին: Արդեօք Հարստութեան կայսերութեան հետ վերջնականապէս միանալուց յետոյ կը բարեփոխվեն նրանց դրութիւնը, մենք համարձակում ենք կասկածել: Աւստրիան, իր երկու տարվայ կառավարութեան ընթացքում ցոյց տուցել իր շնորհը պաշտօնական հաստատադրիչներին յայտնի է որ բնակիչները այնտեղի կառավարութեան լծի տակ սատակ ճնշվում են: Դիմադրելի է աւարկել, ուրեմն, որ վերջնականապէս չը միանալու պատճառով չէ կարելի արգար և օրինաւոր վարչութեան ձև մտցնել այդ նահանգներում: Ո՞վ էր այդ բանին արգելք դնում, եթէ կառավարութիւնը ինքը բարի ցանկութիւն ունէր:

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հաճօք հեռագրում են, որ Մարաշայի մէջ կաթօլիկ մտնող ամբողջ յարձակից մեծ թօղի ստանալու արգիտան վրա և յարկաւորութիւնով արգիտան մէջ գտնվող բոլոր իրեղենները պրեց նրանց: Այսուհետեւ ամենքը ժողովակցին մայր-եկեղեցում և օրհնութիւն ընդունեցին կաթօլիկ քահանաների ձեռքից:

— Եւսպոլից հարդրում են, որ Իսկիա կղզու վրա երկրաշարժ եղած, որ բաւական մեծ վրէպաներ հասցրեց, ոչնչացնելով բազմաթիւ բնակարաններ: Մի քանի մարդիկ սպանված են:

— Վաշինգտոնից հեռագրով հարդրում են, որ փետրվարի 21-ին (մարտի 5-ին) Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների նոր նախագահ Հարրիզը ընդունեց իր պաշտօնը: Ինչու ևս

նոր միսիստրոթիւնը կազմված է: Լսվում է որ Բլէնկ նշանակվելու է պետական քարտուղար, Լինկոլն, նախկին նախագահի որդին, նշանակվելու է պատերազմական միսիստր, Ուինգոն Ֆինանսների միսիստր:

— Ինչպէս յայտնի է Ֆրանսիան վճուեց մուտքնել օրինորդական միջնակարգ աշխարհական ուսումը: Այժմ ազգային ժողովի առաջարկութեամբ պետք է հիմնվեն Ֆրանսիայում կանանց ուսուցչական դպրոցներ, իրական միջնակարգ դպրոցների համար ուսուցչուհիներ պատրաստելու համար:

— Լրագրիչների մէջ կարգում ենք. Թիւրքացի և պարսից կառավարութիւնները պայման կապեցին իրանց մէջ խառն յանձնաժողով նշանակել սահմանի հարցը վճարելու և Քիւրդիստանը խաղաղացնելու համար:

— Մարդիկը գրում են լրագրիչներին, որ այնտեղի նոր միսիստրոթիւնը վճուեց թագաւորի հաստատութեանը առաջարկել հետեւեալ նախագծերը.— բոլոր վեոտուարականներին, որոնք նախաձեռն են քաղաքական յանցանքների համար, ներումն չորհել: չրջարեական ուղարկել համալսարանների ընկառններին 1875 թ-ից քաղաքական հանդուրձանքների համար արտարված բոլոր պրօֆեսորներին վերադարձնել աքսորից, և մէկ հրաման հրատարակել Միւրսեդն իշխանուհուն Աստուրիական իշխանուհու տիպոսը տալու մասին: Կորտեսները կը հաւաքվեն միայն քիւրճիտը քննելու համար և յետոյ կարձակվեն:

— «Tempo» լրագրի Մարդիկ թղթակիցը գրում է, որ Մարդիկում ապրող Ֆրանսիացիք վրոտված են այն բանի դէմ, որ գուրս Ֆէրնանդ-Նուսեցի ի պատիւ Ալֆոնս Թագաւորի երկը բոլորի տուած տնտեսականութեամբ, ուր հրաւիրված էր և Ֆրանսիական դեսպան ծովապետ ժորէ, ներկայ էր և նախկին մարշալ Բազէն: Բազէն և նրա կինը ընդունված են մարդիկիսան արիստօկրատիական շատ աներում և դիպլոմատները շատ անգամ նրանց պատահում են հատարակութեան և օպերայի մէջ, բայց ոչ ոք այս բանին նշանակութիւն չէ տալիս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 2 մարտի: Այսօր առաւօտ ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսրի մարմնի գեմեալը աւարտած է: Մարմնի քննելուց յետոյ յայտնվեցաւ որ թագաւորի կազմուածքը առողջ գրութեան մէջ էր: Շնչառութեան դժուարութիւնը, որ վերջին տարիները զգում էր Կայսրը, առաջ էր գալիս թոքերի անօթիների լայնանալուց: Կայսրը դրված է Պրէօքրատէնեան գնդի համադրեալով, առանց շքանշանների, անկողնակալի վրա, պարագլուխների սենեակում:

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 2 մարտի: Լրագրիչները հարդրում են: Քանի մօտենում էր Ձմեռնային պալատին, Թագաւորը ուշքը կորցնում էր, արիւնի կորուստից: Կրուպովիկի և Մարկուս բժշկները առաջնիններն եկան և փորձեցին կապել արտերիաները: Նրանցից յետոյ եկած բժշկապետ Բօտիկին ուշադրութեամբ գնում էր սրտի բարակումն և վերքերը կապելուց յետոյ ասեց որ սրտի հնչելները աւելի լսելի են լինում ձմեռամբ թիւ էֆիլի արիկուց: Շնչառութիւնը վերականգնվեցաւ: Խոստովանահայր Բօտանով օգուտ քաղեց յարմար քօպէից և հարդրութիւն տուեց Թագաւորին: Յոյսերը նորոգվեցան: Աւարկեցին սրիւն տեղափոխելու գործիքը բերելու: Բայց ձախտազերը այլպէս էր ստօրինել: Բօտիկին սկսեց նշմարել սրտի զարկերի սատիճանատալը թուլանալը: Շնչառութիւնը նուազվում էր, վերջապէս ժամը 3-ին և 35 քօպէին Թագաւորը փոխվեցաւ յաւիտենականութեան: Այսօր մօտ 3 ժամին թնդանօթների ձայնը ազգարարեց Ալէքսանդր Սի. Գաճ բարձրանալը: Խորին սուգ է նշանակված:

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 2 մարտի: Այսօր հասաւ գեներալ Սիբօրցիկից ուղարկված պօղպօրաչիկ Կառլֆան, բերելով իր հետ

մանրաման գեկուցումն արշաւանքի մասին:

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 2 մարտի: Երրորդ ներքին 5% փոխառութեան տիրածք:

ՆՁՆ	ՆՁՆ	տարած գումար
սերիի	տոմս	
6305	27	200,000
821	32	75,000
7320	10	40,000
6329	10	25,000
14165	41	
5824	40	10,000
8390	28	
4527	11	
11237	37	
17203	35	8,000
4184	41	
18360	44	
1139	44	
2438	42	
4725	29	
12462	33	
3540	47	5,000
3452	20	
3220	48	
11515	29	
12598	33	
18042	28	
13469	12	
16101	50	
15329	16	
19225	40	
11643	25	
14653	36	
11431	6	
9736	15	1,000
19386	5	
12997	30	
1063	33	
5280	17	
14494	32	
12623	50	
3398	36	
9692	21	
3918	43	
10437	46	

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 3 մարտի: «Правит. Вѣстн.» լրագրիչը հարդրում է հետեւեալը. Երէկ 1 ժամին կէսօրից յետոյ Թագաւորը և Թագուհին, Թագաժառանգի և Կայսերական ընտանիքի անդամների հետ, գուրս եկան ներքին սենեակներից: Կանգնելով Նիկոլայի քահանայի գահին, Թագաւորը դիմեց գեներալներին և Ֆիլիցենդրին, նշանաւոր խօսքերով, որոնց մէջ յայտնելով ի Տէր հանգուցեալ Թագաւորի անունով երախտագիտութիւն նրանց հաւատարիմ ծառայութեան համար, հաճեցաւ յայտնել, որ ինքն ժառանգութիւնը ընդունելով այսպիսի ծարօպէին, կը ծառայի Ռուսաստանին նրա բարօրութեան համար, և յոյս ունի գրաւել նրա սերը: Ենթադէս հաւատացած է, որ գործերը կը ծառայեն իր ժառանգին նոյն հաւատարմութեամբ և եռանդով, ինչպէս ծառայում էին հանգուցեալ Թագաւորին: Վերջը նորին Մեծօթիւնը կրկին անգամ յայտնեց իր զնորի կողմից շնորհակալութիւն նրանց ծառայութեան համար. այս խօսքերը շարժելով արտասովոր ներկայ գլխաւորներին, նրանք միաձայն «ուրա» կանչեցին: Պաշտօնական երգում ընդունելուց յետոյ, Թագաւորը մտաւ դահլիճը, ուր գտնվում էին պետական խորհրդի անդամները և սկիստան և յայտնեց իր երախտագիտութիւնը նրանց ծառայութեան համար և յոյս յայտնեց, որ նա գրանց մէջ կը գտնի նոյն հաւատարմութիւնը, որպիսին վայելում էր իր հանգուցեալ զնորը: Գտնուով սկիստայի պաշտօնականներին, Թագաւորը յայտնեց, որ նա թողնում է նրանց իր անձի մօտ. յետոյ գնաց ներքնասենեակները: Բարձրագոյն ուղազով հրամայված է բոլոր հաւատարիմ հպատակների հետ զիւղացիներին ևս երգիչները տալ Թագաւորին և ժառանգին հաւատարմութեան մէջ: Կալանաւորված չարագործը Տիկալինի քաղա-

քացի է Նիկոլայ Իվանով Բիսակով ազգանունով, 29 տարեկան է, իր ուսումն սկսեց Վիտեբրեան գաւառական դպրոցում, շարունակեց իր ուսումը Չիռեպովիցի ընկալական դպրոցում: Արտեմբերից 1879 թ-ի նա մտաւ հանքարանական դպրոցը, բայց 1880 թ-ի գեկտեմբերից սկսած դասախօսութիւններին չէր յաճախում: Վերադարձված 18 անձինքներից երկուսը մեռան թիկնապահ հօգակ Մարէվիչ և անյայտ կռուան մի մարդ մօտ 30 տարեկան հասակի: Սորան վերաբերում են երկրորդ ուսման արձակելը, որով սպանվեցաւ Թագաւորը: Ապանութիւնից յետոյ տեղ տեղ ցրված էին յեղափոխական պրօկլամացիաներ: «Порядокъ» լրագրիչը լսել է, որ Թագաւոր Կայսրի հանդիսաւոր թաղումը կը կատարվի վաղձանից երեք շաբաթ յետոյ: Այսօր, մարտի 3-ին, ժամը 8-ին երեկոյեան հրամայված է ժողովել Ձմեռնային պալատում նշարանից դէպի մեծ եկեղեցին մարմնի հանդիսաւոր տեղափոխութեան հանդիսին ներկայ գտնվելու համար:

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 3 մարտի, ժամը 8 և 50 քօպ. երեկոյեան: Ներքին գործերի միսիստրը յայտնում է ընդհանուր գիտութեանը, որ Կայսրի կեանքի դէմ եղեանագործութեան գլխաւոր ղեկավարողներից մինը այն սնան է, որ կալանաւորվեցաւ փետրվարի 27-ին. նա խոստովանվեց իր մասնակցութիւնը յայտնելու մէջ և այդ հաստատում է նոյնպէս եղեանագործութեան քօպէին կալանաւորված Բիսակով, որ այդ յանցանքի կատարող էր, զցելով կառքի տակ առաջին ճայթող ուսմբ: Այն անյայտ սնան, որ, ինչպէս երեւում է, զցել էր կրկնորդ ուսմբը և որ ճայթման տեղի վրա ինքն էլ մահվան հարուած ստացաւ, Բիսակովի վկայութեամբ, որին ցոյց տուին սպանվածի դիակը, եղել է նոյն իսկ գրա ընկերակիցը: Այն բնակարանը, որտեղեց Բիսակով և նրա ընկերը ստացել էին ճայթող ուսմբեր, գտնված է մարտի 3-ին գիշերը: Բնակարանի տէրը, երբ ներկայացան նրա մօտ սատիճանաւորները, անձնատարութիւն գործեց, իսկ մի կին, որ նրա հետ բնակվում էր, ձեռքաւորված է: Բնակարանում գտան ճայթող ուսմբեր, մի օրինակ յեղափոխական պրօկլամացիայի կատարված եղեանագործութեան առիթով գրված, որի մէջ ասված էր, որ յանցաւոր գիտաւորութիւնը կրագործված է երկու անձինքների ձեռքով: Ժամը 11-ին առաւօտեան ներկայացաւ այդ բնակարանը մի երկասարդ, որ և կալանաւորված է: Նրան կալանաւորելու ժամանակ նա վեց անգամ ընկոյվերից արձակեց և վիրաւորեց երեք պօլիցիական սատիճանաւորներին: «Новое Время» լրագրիչը աւելացնում է որ ճայթիւնի ժամանակ մեռաւ 14 տարեկան Նիկոլայ Մակսիմով:

Մ. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 3 մարտի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 թ. 87 կ., երկրորդ 93 թ., երրորդ 93 թ. 50 կ., չորրորդ 93 թ., 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 223 թ. 5 կ., երկրորդ 215 թ., 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 թ. 37 կ., երկրորդ 92 թ. 50 կ., սակի 7 թ. 87 կ.: Ռուսաց 1 թ. 1 օնգոնի վրա արժէ 24,90 պէս, ռուսաց 100 թ. շամբուրդի վրա 213 մարկ, ֆարիդի վրա 264 Փրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է: Վաղը և միւս օրը բօրսան փակված կը լինի:

Խմբագիր.— Տրամադրող Գ. Բ. Գ. Ս. Բ. Բ. Բ. Ն. Ի.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԵՐՈՐՈՒԿԱՆ ԲՈՒՍԿԱՆ ՀԵՂԱՆԻԹ փորձված և առաջարկված պրոֆեսոր բժշկի կրճատիչ և զարգացիչ շատ զեղեցիկ միջոց է՝ **ՍՏԿՐՈՒՐԱՅՈՎԱԿԱՆ ՑԱԵԼԵՐԻ ՂԵՄԻ** և շատացնում է **ԱՐԻՒՆԸ**, վերականգնում է **ՄԱՐՄՆԻ** ընդհանուր հարմունեան, մանաւանդ՝ առաջարկվում է **Հիմնորի** և **Իսպախանդրիա** **ՀԻՆՆԻՈՒԹԵՆ** ղեմ: Մի շնորհ, գործածելու **ԽՐԵՏՆԵՐՈՎ** 1 ր. 80 Կ.: Օտարաբարդաբացիք ուղարկում են **ՓՕՍՏԻ** ծախար: Ծախվում է **Ռուսաստանի ԲՈՒՈՐ ԳԵՂԱՏԵՆՆԵՐԻ** մէջ և զեղեցիկ պահանջները մէջ: Պահանջը **Մասկայում** է, **Ն. Մատենե** յնի մօտ, **Տիբրակայա** փողոց: **Կիլնեպի** մէջ **Կայուչանկու** և **Բրայուչանկու** յնի մօտ: **Վարչապայի** մէջ **Ա. Փ. Գալէի** մօտ: 23—25 (5)

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն	Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ
Համեմատեցէք թէյի ֆունտը 1 ր. 5 Կ.	Մասկայից բերվող թէյի հետ ֆ. 1 ր. 30 Կ.
— — — — — 1 ր. 10 Կ.	— — — — — ֆ. 1 ր. 40 Կ.
— — — — — 1 ր. 20 Կ.	— — — — — ֆ. 1 ր. 60 Կ.
— — — — — 1 ր. 40 Կ.	— — — — — ֆ. 1 ր. 80 Կ.
— — — — — 1 ր. 60 Կ.	— — — — — ֆ. 2 ր. —
— — — — — 1 ր. 80 Կ.	— — — — — ֆ. 2 ր. 50 Կ.
Ամենալաւը — — — — — 2 ր.	— — — — — ֆ. 3 ր.
	51—100

Վերականգնող **ՄԱԿՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց բնական գույնը վերադարձնող: Գինը 2 ր. շնորհ, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԻՒՆԱՅԻ ԻՒԳ**, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը՝ փրձին գլխապաւի ղեմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՈՆ** և **Հոտաւէտ ջրեր** և այլն: 26—100

ՌՈՒՄՈՒՅ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Ստացուեցաւ ուղղակի գործարանից Բամսոն Սիմոն և Հէտի, երկաթէ գուլաններ, երկք անիւներ, ամենագոյնի անասկից, որոնք արդէն ընդունուած են ամեն տեղ մանուսանդ Երևանի նահանգում: Իւրաքանչիւր գուլանի արժէքն է երկք խոփու—85 րուբլի, իսկ գուլանով անոնցներն զիջումն կը լինի: Նոյնպէս ստացուեցան երկրագործական զանազան մեքենաներ, և մեծ քանակութեամբ **Ամերիկայի** և **Եւրոպայի** զանազան տեսակ ապրանքներ: Մագաղի-նում պատուէր կընդունին ամեն տեսակ մեքենաների և այլ ապրանք թէ **Ամերիկայից** և թէ **Եւրոպայից** բերել տարւմանաւոր աշխատանքով: Հասցէն. **Գլխորդակայա փողոց զարեթյ Արժուների, Տրիխիս:** 7—10

ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ, մատուցարանների, կողպէքների, զրիչների, թղթի, հրացանների, ատրճանակների, բաժանների, ցիտրուսամաղաների, կոնֆէկանների, մարաբայի և այլն ծախվում են ԱՆ Գ Լ Ի Ա Կ Ա Ն մ ա գ ա զ ի ն ու մ:

Նոյն տեղը **ԾԱԽՎՈՒՄ ԵՆ** պարտուներ 12 րուբլուց, բրիւկներ 4 րուբլուց, արիֆո արշինը 70 կոպէկից, տարիկներ 12 րուբլուց հատը, կիտրոններն թէյ զարնարը հաւաքած ուղղակի պրանտատրներից 1 ր. 10 կոպէկից մինչև (ամենալաւը) ֆունտը 2 րուբլի առանց թղթի, մակիւնաշներ 8 րուբլուց, և մուրաբայի մէկ վազմը 85 կոպէկով: 2—12

Միևն այժմ չեղած ԵԿԱՆՁԻ ԻՒԳ ԲԺՇԿԱՐԻՏԻ, որ կատարելագործված է բժշկի ՄԱՎՐԻՎԻ ԴԵՅՉԻՑ: Առողջացնում է ամեն տեսակ թոութիւն, եթէ նա բնական չէ: Երեւն ԲՈՒՐԻՆ, ըստանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ Շ Շ այդ իւրից, մանրամասն խՐԵՏՆԵՐՈՎ, գործածութ ան մասին: Այդ իւրը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԳԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և Ելեքանդր ՎԵՆՅԵԼԻՑ, Կազանկայա փողոց № 3: 36—52

ՍԵՐՄԵՐ պարտիզ բոյսերի և ԾԱՂԻԿՆԵՐԻ բոլորովն թԱՐՄ ստացված են կովկասեան Գեղատնտեսական ընկերութեան գործախատարի խանութի մէջ: Գործիչնակայա փողոց № 11: **ԼԱՐՇԻ** խանութ: Սիրմերի ցուցակները ձրի են արվում: 4—10

ՎԱՃԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ ձմեռվայ պայտօներ 12 ր., ֆունտայիններ 2 ր. 50 Կ., զլխարկներ 1 ր., մատուցարաններ 5 կոպէկ, ամաններ հատը 12 Կ., հնդկական բրիւնձ 10 Կ. ֆունտը: **Անգլիական կոնֆէկաններ** 40 Կ., իսկ թէյ, որի ֆունտը ամեն տեղ 2 ր. 50 Կ. արժէ, 1 ր. 80 Կ. է ծախվում: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՍՆՈՒԹԻ ՄԻՋ ԱՐՇՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆՈՒՄ:** 12—12

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ ԲՈՒՇՈՑ ԿՐԻՎՈՅ ՓՈՂՈՑԻ վրա գրանկոյ խեղդիկանցի և զեղեցիկ **ՏԱՆՎԵՐԻՆ ՅԱՐԿԸ**: Պայմանների մասին **ԳԻՄԵԼ Պ. ԻԵՐՈՒԿԵԱՆՑԻՆ**, Միխայիլովայա փողոցի վրա № 56: 4—4

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ ՍԵՐԵՐԵԱՆՆԻ ՌՍԿԵՐԻՉԻՍԱՆԱՓՈՂՈՑԻ վրա գրանկոյ **ԻԵՐՈՒԿԵԱՆՑԻ ՏՈՒՆԸ** № 22: Պայմանների մասին **ԳԻՄԵԼ Պ. ԻԵՐՈՒԿԵԱՆՑԻՆ**, Միխայիլովայա փողոցի վրա № 56: 4—4

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ ՍԵՐԵՐԵԱՆՆԻ ՌՍԿԵՐԻՉԻՍԱՆԱՓՈՂՈՑԻ վրա գրանկոյ **ԻԵՐՈՒԿԵԱՆՑԻ ՏՈՒՆԸ** № 22: Պայմանների մասին **ԳԻՄԵԼ Պ. ԻԵՐՈՒԿԵԱՆՑԻՆ**, Միխայիլովայա փողոցի վրա № 56: 4—4

2ր նոյնով մարտի աւելանալու սպանցները առաջին գներով կը ծախվեն: **ԿՈՆԳՈՒԹԵՑ** 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիւսնային **ԿՍՅՍԱՌԻ** 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԻՑ** 2 ր. առանց թղթի: **Անգլիական բեյզովներ** 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. **Անգլիական խանութի** մէջ: **Գործախատարի** **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՐՄԱՐԸ**, ջնտնի **ԿՈՂՊԵՆԵՐԸ**, ջուրնորի **ԳՐԻՉՆԵՐԸ** և կիտրակա կակաօշիկայի ծախելու համար որոնք Կարելի հոտիսի ժամանակ օտէ մեղաւ ստացան: **ՀՈՏԱԼԵՑ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊՍՏԱՆԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 Կ. և ամենալաւը 2 ր. 30 Կ.: **Վաճառականներն** օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել **Անգլիական խանութի** մէջ: **Ամբողջ հազուստ** 15 ր., կոնֆէկաններ հազի ղեմ 60 Կ. ֆունտը: 34—100

Կենտրոնական գրադաճաւանդում ի միջի այլոց վաճառվում են հետևեալ գրքերը:

1. Արուեստ երկայնակեցութեան, որ է առողջ, երկայն ու երջանիկ ապրելու ուսումը: Շարք բժ. Փոփովիչ. գ. 1—50 Կ.
2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նախնական դպրոցաց: Հեղ. ա. Գառու, գ. 1 ր.
3. Հաշիւաւոր ոճիւրք: Պրէնկովիչ **Մարիպուհին**: Պատկեր. վեպ. Ալ. Դիւմա գ. 1 ր.
4. Գրաւորակ բլուր: Վ. Էպ. Էօտէն Սիւ. 2 հ. գ. 2 ր.
5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վերն 3 հ. բովանդակութիւն ա. հ. Օդապար նաւարկներ. ր. հ. Բնկեցիկ մարդը. գ. Կղզւոյն Գաղանկը գ. 3 ր.
6. Աշխարհի շրջան ու թառն օրումն մէջ: Հեղ. Ժիւլ Վերն գ. 1—50 Կ.
7. Բարիկէյ **ՄԱՍԻԿԱ**: Հեղ. Է. Լարուէ 2 հ. գ. 2 ր.
8. Պարոյր կամ աւտուսն Նիւտէի. կրեաց ծեր. Գ. Պատկանեան գ. 50 Կ.
9. Թուղթ **Մարիսի Արաբեզեան** Հայոց Աշխարհի Ազգի և կեկեցու, ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական տէր Ներսէս Պատրիարքի հայոց գ. 2 ր. 25 Կ.
10. Հ. Ղ. Ալիշանեան: Տեղագիր հայոց Մեծաց գ. 2 ր. 50 Կ.
11. Նուէր Կաղանկի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպերեան գ. 65 Կ.
12. Բնարիկ մանկան. Աղէք. Արարատեանցի գ. 40 Կ.
13. Տարերը իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հատոր գ. 3 ր. 50 Կ.
14. Խորհրդական բերքը: Վիպասանութիւն Ֆոտէր օր. Գաղիացոյ գ. 1 ր.
15. Ընտիր Հայկազունք: Պատկերազարդ կենսագրութիւնը գ. 2 ր. 75 Կ.:

Նոյն տեղը վաճառվում են հայերէն, ռուսերէն և օտար լեզուների դասագրքեր, դասական պիտոյքներ, աշխարհագրական քարտեզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն: Օտարաբարդաբացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետևեալ հասցէիւ. **Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю**. Ճանապ. ծախք պէտք է աւելացնել իւրաքանչիւր ր. 10 Կ.:

ՍԵՐՄԵՐ ԵՏԵՄԻ ԲԺՇԿԱՐԻՏԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՑԻ ԲԺՇԿԱՐԻՏԻ ԵՒ ԵՒԵԼ ՀԵՅԻՄԻ

Թոյլ են ստուած **Մասկայի ԲԺՇԿԱՐԻՏԻ ՓԼԱՌՈՒՏԵՏԻՑ**: Այդ միջոցները մեծ ԳՈՐԾԱՆԻՐՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և առաջարկվում են իբրև **ԱՐԵՆԱԼԱՅԻ** առողջապահական **ՄԻՋՈՑՆԵՐ** բերանի և առամների համար: Կարելի է **ԵՏԵՄՆԵՐԸ** պահպանել **ՓՕՇԻՆԱՅԻՆՈՑ**, սառեցնում են **ԼՕՐՉՈՒՆԻՑԻ ԲԱՐԸ** և վատ ՀՈՏԻ առաջն են առնում: Ետամնաբոյժ բժիշկ **Ե. Է. Եղեյէյի** **ԳԼԽՈՒՄ ԳՆՀԵՍՏԸ** գտնվում է **ՄՕՍԿՎԱՅՈՒՄ**, **ԿՈՒՉՆԵՑԿԻ ԿՍՏՈՒՐ. Ջ. ՍՕԿՈՒՍՈՎ** տանը: Թիֆլիսում կարելի է գտնել **Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ** **ԿՈՎԿԱՍԵՆ** և անդրկովկասեան գլխաւոր **ԳՆՀԵՍՈՒՄ**: Ծախողների **ՆՇԱՆՆԵՐՈՒՄ ԳԻՋՈՒՄՆ** ԿԸ ԼԻՆԻ: 13—30 (11)

ՍԵՐՄԵՐ պարտիզ բոյսերի և ԾԱՂԻԿՆԵՐԻ բոլորովն թԱՐՄ ստացված են կովկասեան Գեղատնտեսական ընկերութեան գործախատարի խանութի մէջ: Գործիչնակայա փողոց № 11: **ԼԱՐՇԻ** խանութ: Սիրմերի ցուցակները ձրի են արվում: 4—10

144 Արժուէտ գաղթել 144 ամենախաւ պահեա մեքէի և հայկիներ: